



«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ
ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ Կարդացածը հասկանալու կարողության
ձևավորումը մաթեմատիկայի ուսումնական գործընթացում

Առարկան՝ Մաթեմատիկա

Հետազոտող ուսուցչուհի՝ Քրիստինե Հայրապետյան

Ուսումնական հաստատություն՝ Վ. Համբարձումյանի անվան
թիվ 10 հիմնական դպրոց

Երևան 2023

Կարդացածը հասկանալու կարողության ձևավորումը
մաթեմատիկայի ուսումնական գործընթացում

Բովանդակություն

Ներածություն

..... 3

Գլուխ 1. Կարդացածի ընկալման ազդեցությունը մա ուսումնական գործընթացում

.....5

Գլուխ 2. Որքանով է կարդացածի որակը ազդում մաթեմատիկական գործողությունների կիրառման ժամանակ

11

Եզարակացություն

17

Օգտագործված գրականության ցանկ

19

Ներածություն

Անառարկելի է կարդալու և ընթերցանության դերը անձի զարգացման, նրա մասնագիտական կարողությունների ձեռք բերման և հասարակության արժանավոր քաղաքացի դարձնալու գործընթացում: Կարդալը, ընթերցանությունը և նրա նկատմամբ անձի սերը և հակումները մեծ դեր ունեն նրա կյանքում: Կարդալու ընթացքում մարդը ձեռք է բերում ոչ միայն մասնագիտական և անձնային արժեքներ, այլև՝ հոգեկան բավականություն, թեթևություն, կարիքների բավարարում, արժեհամակարգ և այլն: Այս ամենը հնարավոր է իրականացնել, եթե նա ոչ միայն կարդա, այլև հասկանա իր կարդացածը:

Թեմայի արդիականությունը պայմանավորված է երեխաների մոտ կարդացածը հասկանալու, սովորողների մեջ տեսական գիտելիքների և տրամաբանության որոշակի շրջանակի ձևավորմամբ և դրա հետ մեկտեղ նրանց մեջ դիտարկված հաշվողական հմտությունների և թվաբանական խնդիրներ լուծելու կարողությունների մշակմամբ:

Թեմայի ուսուցումն ունի հետևյալ կրթական հիմնական խնդիրները.

- Որքանո՞վ է կարդացածի ընկալումը ազդում մաթեմատիկայի ուսումնական գործընթացի վրա
- ի՞նչ քայլեր ձեռնարկել կարդացածի որակը բարձրացնելու համար:

Աշխատանքում օգտագործված մեթոդները: Աշխատանքում օգտագործվել են նկարագրման և վերլուծականան մեթոդները:

Հետազոտական աշխատանքի նպատակը և խնդիրները: Աշխատանքի հիմնական նպատակն է ուսումնասիրել մաթեմատիկայի դասերի ժամանակ երեխաների կարդացածը հասկանալու և ամրապնդելու մեթոդները, հաշվողական հմտությունների և թվաբանական խնդիրներ լուծելու կարողությունների մշակումը:

Հաստատվել է, որ միջառարկայական կապերը նպաստում են գիտելիքների և հմտությունների փոխանցմանը մի առարկայից մյուսը: Ուսումնական ծրագրի հիմնական առարկաների ռացիոնալ ինտեգրումը նպաստում է աշակերտների ընդհանուր հմտությունների զարգացմանը, ձևավորում է շրջապատող աշխարհի ամբողջական պատկերը, թույլ է տալիս օգտագործել ձեռք բերված գիտելիքների ամբողջությունը տեսական և գործնական խնդիրների լուծման համար:

Հետազոտական աշխատանքի օբյեկտը և առարկան: Հետազոտական նախագծում ուսումնասիրության օբյեկտը երեխաների մոտ տրամաբանության զարգացումն ու հետագայում հասկանալով կարդալու կարողության ձևավորումն է: Բսկ առարկան՝ երեխաների հասկանալու կարողության ձևավորումը:

Հետազոտական աշխատանքի տեղեկատվական հիմքը: Աշխատանքի տեղեկատվական հիմքը տվյալ ոլորտում կատարված հետազոտություններն ու դրանց հիմնավորված հրապարակումներն են, տրամաբանական տարրերի և մաթեմատիկա առարկայի վերաբերյալ հետազոտությունները, ինչպես նաև՝ համացանցում և գրականության մեջ տեղ գտած նյութերը:

Աշխատանքի կառուցվածքը: Հետազոտական աշխատանքը բաղկացած է ներածությունից, 2 ենթակետից, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից, ամփոփված է՝ 18 էջում:

ԳԼՈՒԽ 1. Կարդացածի ընկալման ազդեցությունը մասնատմանական գործընթացում

Անառարկելի է կարդալու և ընթերցանության դերը անձի զարգացման, նրա մասնագիտական կարողությունների ձեռք բերման և հասարակության արժանավոր քաղաքացի դառնալու գործընթացում: Կարդալը, ընթերցանությունը և նրա նկատմամբ անձի սերը և հակումները մեծ դեր ունեն նրա կյանքում: Կարդալու ընթացքում մարդը ձեռք է բերում ոչ միայն մասնագիտական և անձնային արժեքներ, այլև՝ հոգեկան բավականություն, կարիքների բավարարում, արժեհամակարգ և այլն: Այս ամենը հնարավոր է իրականացնել, եթե նա ոչ միայն կարդա, այլև հասկանա իր կարդացածը:

Պատահական չէ, որ տարրական դպրոցի մայրենիի չափորոշիչում և ծրագրում կարևորված է սովորողների կարդալու կարողության զարգացումը, մասնավորապես հասկանալով կարդալու ունակությունը: Այս ունակության ձևավորման ուղղությամբ աշխատանքները հիմնականում իրականացվում են տարրական դպրոցում: Նշված գործընթացն ունի բազմաթիվ դժվարություններ, որոնք ոչ միշտ է հաջողվում հաղթահարել: Յուրաքանչյուր ուսուցիչ փնտրում է իր սեփական մեթոդները, տեխնիկան և տեխնոլոգիաները, որոնք կօգնեն նրան զարգացնել իր աշակերտների մաթեմատիկական կարողությունները: Եվ ես ուզում եմ կանգ առնել ընթերցանության հմտությունների ձևավորման վրա: Տեքստը կարդալու և հասկանալու կարողունակությունը միջառարկայական ուսուցման արդյունք է, և մենք պետք է նպաստենք այդ արդյունքի ձևավորմանը ոչ միայն ընթերցանության դասերին:

Ինչպես հայտնի է, մաթեմատիկան միշտ մեզ հետ է, այն ուղեկցում է մեզ ողջ կյանքի ընթացքում:

Երեխան վաղ տարիքից մանկապարտեզում կամ տանը՝ ծնողների հետ, որպես կենսական անհրաժեշտություն, իրեն շրջապատող առարկաներն ինքնաբերաբար սկսում է դասավորել, հաշվել, համեմատել, ավելացնել, քչացնել, խումբ-խումբ հավաքել, հաշվել մատիկներով՝ աստիճանաբար դառնալով մաթեմատիկայի աշխարհի մի

մասնիկը: Բոլոր կենսական բաղադրիչները՝ խոսելը, լսելը, կարդալը և գրելը, կիրառվում են մաթեմատիկա սովորելու, մաթեմատիկա առարկայի հետ առնչվելու ընթացքում:

Հաշվի առնելով միջառարկայական կապերի ապահովման անհրաժեշտությունն ու դերը ուսումնական գործընթացում՝ կարող ենք ուրախությամբ փաստել, որ ինչպես ուսումնական պլանի այլ բնագավառներում, այնպես էլ մաթեմատիկայի դասավանդման գործընթացում տեքստը կապող օղակի դեր է կատարում, չէ՞ որ խնդիրները նույնպես տեքստեր են, և դրանց վրա տարվող աշխատանքը անվերապահորեն նպաստում է կարդալու որակական՝ ճիշտ կամ անսխալ կարդալ, հասկանալով կամ գիտակցորեն կարդալ, վարժ կամ սահուն կարդալ, արտահայտիչ կամ գեղարվեստորեն կարդալ, արագ կարդալ, հատկանիշներից՝ հատկապես հասկանալով կարդալու կարողության ձևավորմանը: Միաժամանակ տեքստի բովանդակության ընկալումն էլ նպաստում է խնդրի անսխալ լուծմանը՝ զարգացնելով մտածողությունն ու երևակայությունը:

Կարդալու ուսուցման որակից է կախված մյուս առարկաների ուսուցման հաջողությունը, իսկ կարդալու հմտության հիմնական որակը որոշվում է տարրական դասարաններում: Կրտսեր դպրոցականի ընթերցողական կարողությունների զարգացումը նպաստում է ուսուցման արդյունավետության բարձրացմանը: Ճիշտ, սահուն, հասկանալով, արտահայտիչ կարդացող աշակերտներն ավելի լավ են սովորում ցանկացած առարկա, քան կցկտուր կարդացողները: Բանն այն է, որ վատ կարդացողն ընթերցելիս իր ուշադրությունը հիմնականում կենտրոնացնում է կարդալու գործողությանը և չի ըմբռնում կարդացածի բովանդակությունը, հիմնական միտքը և այլն: Լավ կարդացողն արագ է ըմբռնում, հասկանում բնագիրը, որովհետև նա ժամանակ չի ծախսում կարդալու գործողության վրա: Կարդալու կարողության ձևավորումը կրտսեր դպրոցի մայրենիի դասերի հիմնական նպատակն է եղել և մնում է որպես այդպիսին:

Կարդալու գործողությունը հոգեկան մի բարդ երևույթ է, որի վերլուծությունը ուսուցչին ոչ միայն կօգնի հնարավորինս ճիշտ ըմբռնելու այդ գործընթացի առանձին կողմերն ու դրանց ուսուցման դժվարությունները, այլև կնպաստի այդ գործընթացի մեթոդապես ճիշտ կառուցմանն ու արդյունավետ իրականացմանը: Կարդալու հմտությունը խիստ գործնական կարողություն է, սակայն ինքնազարգացման, անձի դաստիարակության, երեխաների ընդհանուր զարգացման, հոգեկան և մտավոր աշխարհի հարստացման ամենաարդյունավետ միջոցն է. Այն խորացնում է

մտածողությունը, միտքը մղում է որոնումների և երևույթների վերլուծության: Ղ. Աղայանը նկատում է, որ ընթերցանության միակ արժեքն այն է, որ ընթերցողի առջև բացում է անհատնում փորձերի շտեմարաններ, որ մարդ իր տանը նստած կարդալու միջոցով շրջում է ամբողջ աշխարհը, դուրս գալիս երկրագնդից, մտնում Երկրի խորքերը, իջնում ծովի ու օվկիանոսի հատակը, իմանում է տարբեր ազգերի կենցաղի, սովորությունների, ապրելակերպի մասին: «Բայց և այնպես, սոքա բոլորը փորձեր են, որոնք այն ժամանակ միայն կարող են լայնացնել ընթերցողի հասկացողության շրջանը, երբ ընթերցողի բնությունը նոցա մարսելու չափ զարգացումն ունի, այդ փաստերից, այդ հանգամանքներից ուղիղ հասկացություն կազմելու կարողություն ունի»:

Մարդկության մտքի գանձը այն անձանց ժառանգությունն է, ովքեր կարդալու կարողություն ունեն: Սա նրանց հնարավորություն է տալիս օգուտ քաղելու այդ գանձից և ինքնագոհ հոգալու իրենց մտավոր մշակության համար: Ով որ ընթերցելու ունակություն չունի, այդ բոլորը նրա համար մեծ մասամբ անմատչելի է: Նախորդների թողած մտավոր գանձը նրան անհասանելի է, ուրեմն և մտավոր մշակության գլխավոր աղբյուրը նրա համար փակ է: Ընթերցանությունը ոչ միայն մտագործունեության էական բաղադրիչ է, այլև կրթության բովանդակային մաս, հետևաբար այն պետք է կազմակերպվի չափորոշչային պահանջներին համապատասխան և ունենա չափելի վերջնարդյունք:

Տարրական դպրոցի մաթեմատիկա առարկայի նպատակներն են՝ սովորողի մոտ ձևավորել և զարգացնել տրամաբանական, լեզվական և ավգորիթմական մտածողություն, կռահելու կարողություն, սովորեցնել ձեռք բերած գիտելիքները և կարողությունները կիրառել տարբեր գործնական խնդիրներ լուծելիս, զարգացնել սովորողի ուշադրությունը, դիտողականությունը, հիշողությունը, աշխատասիրությունը, նպատակապլացությունը, համբերությունը, ինքնուրույնությունը, հնարամտությունը, սերմանել վստահություն սեփական ուժերի նկատմամբ:

Գրքերի ինքնուրույն ընթերցանության և ըմբռնման հմտությունների և կարողությունների զարգացման վրա աշխատանքը պետք է սկսվի առաջին դասարանից:

Տեքստի հետ աշխատելու հմտությունների զարգացման հիմնական ոլորտները ներառում են հետևյալը.

- Սահուն, հստակ և առոգանությամբ տեքստի ընթերցում,
- տեքստում գլխավորի ընդգծում,
- տեքստում հարցի պատասխանը գտնելու ունակություն,
- ճիշտ վերարտադրել կարդացած տեքստը,
- վերարտադրել տեքստը ըստ առաջարկվող պլանի,
- խնդրի լուծման նմուշներ օգտագործելու կարողություն,
- սահմանումներ, բանաձևեր անգիր անելը,
- աշխատել գծագրերի, մոդելների հետ,
- նոր տեսության կիրառումը կրթական և կյանքի տարբեր իրավիճակներում:

Ուսուցիչը մաթեմատիկայի յուրաքանչյուր դասաժամին պետք է համակարգված աշխատանք կազմակերպի երեք փուլով՝ կարդալուց առաջ, կարդալու ընթացքում և կարդալուց հետո: Գրքերի հետ աշխատելու հմտություններն ու կարողությունները կօգնեն երեխային ինքնակրթվել:

Կարդալով խնդիրը՝ սովորողները պետք է պատկերացնեն այն իրադրությունը, որն արտացոլված է այնտեղ: Այդ նպատակով օգտակար է ընթերցելուց հետո պատմել, թե ինչպես են իրենք պատկերացրել տվյալ խնդիրը:

Խնդրի բովանդակությանը տեղեկանալուց հետո կարելի է անցնել լուծման որոնմանը: Աշակերտները պետք է առանձնացնեն խնդրի մեջ մտնող մեծությունները, հայտնի և անհայտ տվյալները, կապեր հաստատեն տվյալների և որոնելիի միջև՝ միաժամանակ ընտրելով համապատասխան թվաբանական գործողությունները: Այդուհանդերձ երեխաները երբեմն դժվարությամբ են տարբերում խնդրի լուծումը և հարցը. լսելով խնդրի պայմանը՝ երեխան անմիջապես ասում է որևէ պատասխան՝ չհասկանալով, թե խնդիրը հատկապես ինչ է հարցնում:

Պարզ է, որ խնդիրների լուծման հիմնական պայմանը ինֆորմացիայի ճիշտ ընկալումն ու մշակումն է: Առաջին իսկ քայլերից երեխաները պետք է հասկանան, որ հնարավոր չէ խնդիրը լուծել առանց խնդրի բովանդակության ճիշտ ըմբռնման:

Այնուհետև կատարվում է խնդրի համառոտագրումը, կազմվում է լուծման պլանը: Խնդիրների հետ տարվող աշխատանքում մեծ տեղ պետք է հատկացնել

մոդելավորմանը: Այն չի հակասում խնդրի բովանդակության համառոտագրմանը կամ զննական պատկերացմանը: Մոդել ասելով պետք է հասկանալ մտովի կամ հատուկ կառուցված համակարգ, որը կոնկրետ կերպով արտացոլում է խնդրի բովանդակությունը:

Մաթեմատիկական խնդիրների մեծ տեղ հատկացնելը մաթեմատիկայի ուսուցման գործընթացի կարևորագույն պայմաններից է: Խնդիրները բացահայտում են թվաբանական գործողությունների կոնկրետ իմաստները, գործողությունների արդյունքների և բաղադրամասերի փոխադրած կախվածությունները, զարգացնում են աշակերտների մտածողությունն ու խոսքը:

Ուսուցման գործընթացի արդյունավետության բարձրացման ուղղությամբ կատարված հոգեբանամանկավարժական ուսումնասիրությունները վկայում են, որ խնդիրներ լուծելու գործընթացում հիմնական թերությունը եղել և մնում է այն, որ աշակերտները լուծում են խնդիրները, բայց անհրաժեշտ մակարդակով չեն ընկալում իրենց իսկ կատարած գործողությունների իմաստները: Այդ թերությունը վերացնելու հուսալի ուղին հանգամանակից վերլուծությունն է:

Պետք է հիշել խնդրի լուծման հետևյալ ընդհանուր սխեման.

1. ծանոթություն խնդրի բովանդակությանը՝ վարժ և սահուն կարդալու դեպքում կարելի է ընկալել խնդրի բովանդակությունը,
2. խնդրի վերլուծություն
3. խնդրի համառոտագրում
4. խնդրի լուծման ուղիների որոնում
5. խնդրի լուծման պլանի կազման
6. խնդրի լուծում
7. խնդրի լուծման ստուգում
8. խնդրի պահանջի (հարցի) պատասխանը:

Այսպիսով՝ խնդիրները աշակերտներից պահանջում են որոշակի խոսքային

մակարդակի զարգացում և բառատրամաբանական մտածողություն՝ հարստացնելով երեխաների բառային խոսքը՝ նոր բառերի և բառակապակցությունների հաշվին՝ օգտագործելով ծանոթ արտահայտությունները այլ պայմաններում: Այս ամենի հետ մեկտեղ բարձրացնելով կարդալու որակը, կարելի է հասնել մաթեմատիկայի ուսումնական գործընթացում առավելագույն արդյունքի:

Գլուխ 2. Որքանով է կարդացածի որակը ազդում մաթեմատիկական գոնձողությունների կիրառման ժամանակ

Արդի Մաթեմատիկական գիտությունների թագուհին է, ասել է մեծ գիտնական Կարլ Ֆրիդրիխ Գաուսը: Այն կապված է հսկայական թվով գիտությունների հետ, ինչպիսիք են ֆիզիկան, քիմիան, աստղագիտությունը, աշխարհագրությունը, համակարգչային գիտությունը, գրականությունը, տնտեսագիտությունը և նույնիսկ երաժշտությունը:

Արդի աշխարհում տեխնիկայի և գիտության սրընթաց զարգացումը նոր խնդիրներ է դնում կրթության առջև: Բազմաթիվ մասնագիտություններ, որոնք այսօր հարգի են, շուտով փոխարինվելու են մեքենաների և ռոբոտների աշխատանքով: Ահա այդ է պատճառը, որ հանրակարթական դպրոցում հայոց (մայրենի) լեզվի և գրականության ուսուցումը և ուսումնառությունը ևս հիմնավոր փոփոխության կարիք ունեն: Մայրենի լեզվի ուսումնառության շեշտադրումը պիտի լինեն որոշակի կարողությունների և հմտությունների, ինչպես նաև սովորողի վերաբերմունքի, արժեքային համակարգի ձևավորումը, զարգացումը և կատարելագործումը:

Մաթեմատիկական սերտորեն կապված է մայրենիի հետ: Մենք՝ ծնողներս, սովոր ենք անընդհատ կրկնել երեխաներին. «Մենք պետք է կարդանք, առանց կարդալու ոչնչի չենք կարող հասնել»: Սակայն քչերս ենք հասկանում, թե որն է դրա իրական օգտագործումը, բացառությամբ զուտ ամենօրյա օգտագործման, երբ անհրաժեշտ է կարդալ հագուստի վրա ցուցանակ կամ պիտակ: հողվածում կքննարկվի թե որքանով էր նթերցանությունը գիտական տեսանկյունից կապված մաթեմատիկայի հետ և ինչպես է այն կապված մաթեմատիկական ունակությունների հետ,

«Ընթերցանությունը զարգացնում է խոսքի գործառույթները, և դրանց միջոցով՝ մնացած ամեն ինչ՝ մտածելուց մինչև երևակայություն»

Ինչո՞ւ է ընթերցանությունն այդքան արժեք, հատկապես մեր մշակույթում: Առաջին ասոցիացիաներն են կրթությունը, գիտելիքը, մտածողության խորությունը: Այժմ ընթերցանությունը երկրորդ քամի է ստանում, այն դառնում է այլընտրանք սոցիալական

ցանցերի, տեսանյութերի և նկարների «արագ ածխաջրերին»: Տեղեկատվությունը տառերի միջոցով ավելի դանդաղ է գալիս և պահանջում է ավելի շատ կենտրոնացում: Բայց դրանց միջոցով բացահայտված իմաստների հարստությունը անչափ ավելի մեծ է: Ընթերցանությունը միանգամից չի բացահայտում ողջ էությունը, այլ նախ միացնում է երևակայությունը, սովորեցնում է պատկերացնել, կենտրոնանալ և ընտելանալ տարբեր աշխարհներին:

Եթե վերցնենք երեխայի զարգացման վաղ փուլը, ապա ընթերցանությունը զարգացնում է աշխատանքային հիշողությունը և կամավոր ուշադրությունը, իսկ երկրորդ փուլում, երբ երեխան արդեն ինքնուրույն կարդում է, սա ներքին ներկայացում է, պատճառահետևանքային վերլուծություն: Երեխաները կարող են հասկանալ կարդացածը, կարդացածը վերլուծել և կազմել այլընտրանքային սցենարներ: Երբ երեխան նոր է սկսում կարդալ, նյարդային մակարդակում այդ ունակությունը սկսում է բեռնվել և տեղավորվել ձախ կողմում գտնվող ուղեղի նախաճակատային հատվածները: Կոգնիտիվ հոգեբանների համար սա այն տարածքն է, որը զբաղեցնում է նաև աշխատանքային հիշողությունը: Երեխաների լավ զարգացած աշխատանքային հիշողությունը գիտակցաբար վերահսկելու և գործողությունները պլանավորելու կարողությունն է:

Իմ կարծիքով երեխայի մոտ մաթեմատիկա առարկայի նկատմամբ հետաքրքրություն առաջացնելու համար, նա պետք հստակ հասկանա ինչ է իրենց պահանջվում անել: Ուսուցիչը պետք է ուղղորդի աշակերտին, օգնի նրան: Դասարանի մակարդակից ելնելով մենք գիտենք, որ աշակերտների ընթերցանության մակարդակները տարբեր են և ըստ այդմ էլ դասը կազմակերպում ենք փուլերով:

Առաջին փուլում աշխատանք է տարվում մինչ կարդալը : Դասագրքի տեքստի հետ աշխատելու այս փուլում անհրաժեշտ է յուրաքանչյուր երեխային ներքին կարգով ներառել ընթերցանության մեջ: Գրքի հետ աշխատելու մեծ առավելություն կլինի, եթե աշակերտների համար դժվար չլինի վերնագրով ասել, թե ինչ է ուսումնասիրվելու այսօր: Հիմնական տեխնիկան, որը ուսուցիչը կարող է օգտագործել այս փուլում՝ նոր նյութ ուսումնասիրելիս «Գաղափարների բանկ» տեխնիկան է, որտեղ աշակերտները առաջ

բերում իրենց մտքերն այն մասին, թե ինչ է այսօր դաիսն ուսումնասիրվելու: Միննույն ժամանակ, ուսուցիչը գրատախտակին կախում է ուսանողների հայտարարությունների պատրաստված նշումները (կամ գրում է դրանք), որպեսզի դասի վերջում կարողանա ստուգել՝ արդյոք նրանց առաջ քաշած վարկածները ճիշտ են, թե ոչ: Մա այն գաղափարների բանկն է, որին մենք հղացել ենք «Ժամանակ» թեման ուսումնասիրելիս:

Երկրորդ փուլում անմիջապես տեքստի հետ աշխատանքն է: Մա ինքնին ընթերցումն է: Նոր նյութ ուսումնասիրելիս (նոր տերմիններ ներմուծելիս, կանոններին ծանոթանալիս) պետք է ընդգծել, որ դասագրքի հետ աշխատելը պետք է անպայման հետապնդի որոշակի նպատակ, որը նախ ուսուցիչն ասում է աշակերտներին, իսկ հետո նրանք իրենք կսկսեն նպատակներ դնել. դասագիրքը կարդալու համար:

Ձեր կարդացած դասագրքի տեքստը ավելի լավ հասկանալու համար կարող եք օգտագործել «Ներդիր» մեթոդական տեխնիկան: Տեխնիկապես դա բավականին պարզ է. Աշակերտներին պետք է ծանոթացնել մի շարք նշումների և խնդրել դրանք մատիտով գրել հատուկ ընտրված և տպագրված տեքստի լուսանցքներում, երբ նրանք կարդում են: Տեքստում պետք է նշվեն առանձին պարբերություններ կամ նախադասություններ: Նշումները կարող են լինել հետևյալը.

Նշան	Նշանների իմաստները
V	տեքստում նշվում է այն տեղեկատվությունը, որն արդեն հայտնի է աշակերտին
+	նշվում է նոր տեղեկությունը, նոր գիտելիքը
—	Նշվում է այն տեղեկությունը, որը հակասում է աշակերտի գոյություն ունեցող գաղափարներին, մի տեղեկություն, որի մասին նա այլ կերպ է մտածել
?	Նշվում է այն տեղեկությունը, որը հասկանալի չէր, որը կարիք ունի լրացուցիչ բացատրության

Սովորաբար դպրոցականները հեշտությամբ նշում են, որ կարդացած տեքստում հանդիպել են ծանոթ ինչ-որ բանի և հայտնում, որ իրենք իրենց համար նոր ու անսպասելի բան են սովորել: Միևնույն ժամանակ, կարևոր է, որ ուսանողները ուղղակիորեն կարդան տեքստը և հղում կատարեն դրան: Մրանք այն նշումներն են, որ երրորդ դասարանի աշակերտները կատարել են «Ժամանակ» թեման ուսումնասիրելիս:

Համաձայն եմ, այս տեխնիկան տեսանելի կդարձնի տեղեկատվության կուտակման գործընթացը, ճանապարհը «հին» գիտելիքից դեպի «նոր»:

Բառային խնդիրներ լուծելիս գրքից տեղեկատվությունը մշակելու անհրաժեշտ միջոցներից մեկը կարդացածի պլան կազմելն է: Հաջողությամբ կազմված պլանը խոսում է վերջնական արդյունքի, տեքստը վերլուծելու կարողության և բովանդակության յուրացման աստիճանի մասին: Սա կարճ գրառման հավաքածու է, որից աշակերտները կարող են հեշտությամբ վերհիշել իրենց կարդացածի բովանդակությունը: Կարճ նշում կատարելով՝ վերլուծում ենք մեր կարդացածը.

- ի՞նչ գիտենք խնդրի պայմանների մասին,
- հնարավո՞ր է անմիջապես պատասխանել առաջադրանքի հարցին,
- ի՞նչ է պետք իմանալ հարցին պատասխանելու համար...

Շատ դեպքերում աշակերտներն առանց դժվարության վերարտադրում են խնդրի տեքստը համառոտագրում են գծապատկերի՝ գծանկար կամ մոդելի տեսքով: Մրանով ավարտվում է տեքստի հետ աշխատելու երկրորդ փուլը:

Երրորդ փուլը աշխատանքն է տեքստը կարդալուց հետո; Դասարանում նոր թեմա ուսումնասիրելուց հետո աշակերտներին հանձնարարվում է հարցեր կազմել դասագրքի նյութի հիման վրա: Յուրաքանչյուր ոք գրում է իր հարցերը թղթի վրա, որը կցված է գրատախտակին: Այս մեթոդով ամրապնդվում է ուսումնասիրվող թեմայի մասին նոր գիտելիքները:

Հաջորդ դասի սկզբում «գիտելիքի ծառից» հանվում են տերմինները, ընթերցվում են հարցեր, և ուսանողները պատասխանում են դրանց: Նման աշխատանքը զարգացնում է ինքնուրույն մտածողությունը, գիտելիքների ձգտումը, խոսքի հմտությունները, նվազեցնում հոգնածությունը:

Մաթեմատիկական տեքստի հետ աշխատելիս մեկ այլ պարզ տեխնիկա բանալի բառերի՝ կլաստերների ստեղծումն է: Ուսանողները թերթի կենտրոնում գրում են

հիմնական հասկացությունը և դրանից տարբեր ուղղություններով գծում են սլաք-ճառագայթներ: Կլաստեր ստեղծելը թույլ է տալիս ուսանողներին ազատ և բաց մտածել թեմայի շուրջ:

Այսպիսով, ուսուցման գործընթացի արդյունավետությունը կախված է տեխնոլոգիական տեխնիկական ճիշտ ընտրելու, դրանք հաջողությամբ համադրելու և դասի արդեն ծանոթ ավանդական ձևերի շրջանակում տեղավորելու կարողությունից:

Մաթեմատիկայի դասերին գիտակցված ընթերցանության տեխնոլոգիայի կիրառումը թույլ տվեց մեզ նկատել, որ նույնիսկ հումանիտար գիտությունների նկատմամբ ավելի հակված երեխաներն ավելի հեշտ են սովորում մաթեմատիկական նյութը: Կարելի է ենթադրել, որ այս ուղղությամբ ուսանողների հետ աշխատանքը կօգնի իրականացնել Ռուսաստանի Դաշնության մաթեմատիկական հայեցակարգի առաջատար գաղափարներից մեկը.

«...Մաթեմատիկոսին անկարող երեխայի հասկացությունը կվերանա ուսուցիչների, ծնողների և հասարակության բառապաշարից»:

Վերոնշյալ նպատակների իրականացման հիմնական ճանապարհներ են լսել և դիտել, խոսել, կարդալ, գրել, ցուցադրել և այլն՝ նկատի ունենալով նաև ուսումնառության համընդհանուր ձևավորման մոդելը: Լսել, լսի և հասկանա փոխանցվող տեղեկույթը, քննողաբար վերաբերվի իր և ուրիշների ենթադրություններին, ակտիվորեն լսի և հարգաքով վերաբերվի այլ մարդկանց տեսակետներին և գաղափարներին: Խոսել. հաղորդակցման տարբեր միջոցներով (ժեստերի լեզու, նկար) մասնակցի երկխոսության, պատմի տեսածի, լսածի, կարդացածի բովանդակությունը, նկարագրի տարաբնույթ երևույթների փոխակապակցվածությունը, արտահայտի, հիմնավորի, պաշտպանի սեփական տեսակետն ու դիրքորոշումը, մեկնաբանի և վերլուծի իր զգացմունքները, ցանկությունները, կարիքները: Հանդես գա մենախոսությամբ, լսարանին ներկայացնի իր տեսակետը՝ հիմնավորելով փաստերով և տվյալներով:

Կարդալ. հայերենի ուղղախոսությանը հատուկ ճիշտ արտասանությամբ և հնչերանգով, հասկանալով կարդա տարբեր ոճերի տեքստեր, հաղորդի կարդացածի իմաստը, տրամադրությունը: Գրել. գրի առնի լսած, կարդացած խոսքից հիմնական միտքը, դուր եկած հատվածը, վերարտադրի և նորովի շարադրի լսածը, կարդացածը,

տեսածը. բառերով ձևակերպի և հնարավորինս ճշգրիտ վերարտադրի սեփական երևակայության մեջ ստեղծված պատկերները::

Ոչ թե տեղողությունը, այլ *վերապատրաստման վարժությունների հաճախականությունը* ... Մարդկային հիշողությունը դասավորված է այնպես, որ հիշվողը ոչ թե այն է, ինչ անընդհատ աչքիդ առաջ է, այլ այն, ինչ թարթում է. այսինքն՝ այդպես չէ: Հենց դա էլ գրգռվածություն է առաջացնում ու հիշվում: Հետևաբար, եթե մենք ցանկանում ենք տիրապետել որոշ հմտությունների, դրանք հասցնել ավտոմատիզմի, հմտության մակարդակի, ապա մենք ընդհանրապես չպետք է երկար վարժություններ կատարենք, երկար ժամանակ. մենք պետք է մարզվենք կարճ մասերում, բայց մեծ հաճախականությամբ:

Օրինակ, եթե առաջին դասարանցին, ով վատ է կարդում, հարկադրված է տանը մի ամբողջ պատմություն կարդալ: Մա մեկուկես ժամ շատ դժվար աշխատանք է: Շատ ավելի լավ կլիներ, եթե տնային մարզումները կատարվեին երեք 5 րոպեանոց ծառայությունների ընթացքում: Երեխան կարդում է մի փոքրիկ պարբերություն և վերապատմում դրա բովանդակությունը: Մեկ-երկու ժամից ևս մեկ բաժին: Եվս մեկ բաժին քնելուց առաջ. Նման մարզումների արդյունավետությունը շատ ավելի բարձր է, քան մեկուկես ժամ մարզվելը:

Ուսուցիչը յուրաքանչյուր դասաժամին մաթեմատիկայի դասագրքով պետք է համակարգված աշխատանք կազմակերպի երեք փուլով՝ կարդալուց առաջ, կարդալու ընթացքում և կարդալուց հետո: Գրքերի հետ աշխատելու հմտություններն ու կարողությունները հետագայում ստեղծվել են յուրաքանչյուր երեխայի հաջող ինքնակրթության մեջ օգնելու համար:

Եզրակացություն

Կարդալը, ընթերցանությունը և նրա նկատմամբ անձի սերը և հակումները մեծ դեր ունեն նրա կյանքում: Կարդալու ընթացքում մարդը ձեռք է բերում ոչ միայն մասնագիտական և անձնային արժեքներ, այլև՝ հոգեկան բավականություն, թեթևություն, կարիքների բավարարում, արժեհամակարգ և այլն: Այս ամենը հնարավոր է իրականացնել, եթե նա ոչ միայն կարդա, այլև հասկանա իր կարդացածը:

Այսպիսով՝ ուսումնասիրելով տարրական դասարաններում կարդալու տեխնիկայի զարգացմանը նպաստող արդյունավետ մոտեցումները, կատարեցինք հետևյալ եզրահանգումները.

1. Աշակերտը միայն այն ժամանակ է կարողանում ապացուցել, որ իր կարդացածը հասկանում է, երբ իր արտահայտած խոսքը համապատասխանում է ընթերցածի բովանդակությանը:

2. Հասկանալով և գիտակցաբար կարդալու կարողության ձևավորմանը օգնում է հատկապես բնագրերի շուրջ նյութի ընթերցումից հետո իրականացվող հարցազրույցը:

3. Ընթերցողական կարողությունների զարգացմանը նպաստում են բնագրերի շուրջ տարվող տարբեր վարժանքներն ու խաղերը:

4. Պետք է հասնել այն բանին, որ կարդալու մեխանիզմը դառնա միանգամայն ավտոմատ և չշեղի մտքերը: Պետք է ուշադիր լինել նաև գիրքը ընտրելու հարցում: Ընթերցանության նյութը պետք է մատչելի լինի, որպեսզի նոր բեռ չավելանա դասերի վրա: Այն պետք է կազմված լինի այնպես, որ ընթերցանության միջոցով հասու լինի գեղեցիկին, ընդարձակի մտահորիզոնը, գեղագիտական ճաշակ ու ազնիվ զգացումներ զարգացնի նրանց մեջ: Մատչելի լինելով հանդերձ՝ պետք է լուրջ լինի, որպեսզի երեխան զգա, որ նրանից են սկիզբ առնում իր մտավոր ուժերը:

5. Ընթերցանության հմտություններն անմիջականորեն ազդում են սովորողների ուսումնառության արդյունավետության և մոտիվացիայի վրա:

Այս առումով առաջնային անհրաժեշտություն է դառնում հանրակրթության բոլոր աստիճաններում սովորողների ընթերցանության խրախուսումը:

6. Ընթերցումը անփոխարինելի միակ հմտությունն է, որն ուղղակիորեն ազդում է մտածողության զարգացման վրա: Այն վերլուծական կարողությունները զարգացնելու միջոց է, մարդու անմիջական զարգացման նախապայման , որը պիտի զարգացնել սկսած տարրական դպրոցից:

7. Մինչև չապահովվի կարդալու հմտության մշակումը՝ բոլոր որակակն հասկանիշներով, դասագիրքը չի կարող իր առևջ դրված և ոչ մի խնդիր:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Հանրակրթության պետական չափորոշիչ և ծրագիր
2. Այբբենարան, 1-4 դասարանների մայրենիի դասագրքեր
3. Ամիրջանյան Յու., Ա. Սահակյան., Մանկավարժություն, Երևան 2005
4. Հարությունյան Հ.Ս., Չիրուխյան Ս.Ա., «Մաթեմատիկայի իմ այբուբենը», Մաս 1,2, Երևան 2007
5. Հարությունյան Հ.Ս., «Խաղալով սովորենք մաթեմատիկա», Երևան 2003
6. Մկրտչյան Արաքսյա., Տրամաբանության տարրերի ներառումը և ուսուցման մեթոդիկական մաթեմատիկայի դպրոցական դասընթացում, Ե.: 2014
7. Белошистая А.В., Занятия по развитию математических способностей детей. В 2 кн.Кн 1. Конспекты занятий. М.: Гуманитарн. Издательский центр Владос 2004